



ԲԱՆԿԻՐՆԵՐԸ՝ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

04.12.2013



Ս.թ. դեկտեմբերի 3-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Հայաստան պետական այցի և «Ռուսաստան: Հայաստան: Մաքսային միություն» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային 3-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ Կենտրոնական բանկում կազմակերպվել էր կլոր սեղան «Ռուս-հայկական

գործընկերության զարգացումը բանկային և ներդրումային ոլորտներում եվրասիական ինտեգրացիոն գործընթացի համատեքստում» թեմայով, որի աշխատանքներին մասնակցեցին նաև Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) ղեկավարները:

Հայկական կողմից միջոցառման համակարգողն էր ՀՀ ԿԲ-ի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ Մ. Աբրահամյանը, ռուսական կողմից՝ «ՎՏԲ բանկ» ԲԲԸ ավագ փոխնախագահ, դուստր բանկերի ստորաբաժանման ղեկավար Մ. Յակունինը: Նկատենք նաև, որ նշված օրը թեմատիկ քննարկումներ էին ծավալվել 9 կլոր սեղանների շուրջ՝ էներգետիկայից, տրանսպորտից և տուրիզմից սկսած մինչև հումանիտար կապեր և տիեզերական տեխնոլոգիաներ:

ՀԲՄ-ի տվյալներով, ներկա պահին Հայաստանում գործում են 21 առևտրային բանկեր, 484 մասնաճյուղերով և մոտավորապես 11,5 հազար աշխատողներով: Այսպիսով բնակիչների ամեն 100 հազարին բաժին է ընկնում 0,69 բանկ և 16 մասնաճյուղ: Ընդ որում, բոլոր բանկերն առանց բացառության ունեն ոչ ռեզիդենտ բաժնետերեր՝ երկրի բանկային համակարգում արտասահմանյան կապիտալի մասնաբաժինը կազմում է 76,6%: Ավելին, 11 բանկերում բաժնեթղթերի 100% պատկանում է ոչ ռեզիդենտներին, և միայն 6-ում նրանք ունեն 50% պակաս բաժնեմաս:

Այսօրվա դրությամբ Հայաստանում բանկերի միջոցով իրագործված ներդրումային ծրագրերի ծավալը մոտենում է \$1,55 մլրդ: Ավելորդություն չի լինի նշել, որ անցած տարվա արդյունքներով բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց դրամային փոխանցումները դեպի Հայաստան կազմել են շոշափելի \$2,23 մլրդ գումար, ընդ որում, մասնավոր տրանսֆերտները միայն Ռուսաստանի Դաշնությունից՝ \$1,64 մլրդ:

Այսպիսով Հայաստանի և Ռուսաստանի հետագա համագործակցությունը բանկային և ներդրումային ոլորտներում արդեն ունի իր հիմքում զգալի բազա: Նշված միջոցառման ընթացքում քննարկվել են Հայաստանի և Ռուսաստանի բանկային և ներդրումային ոլորտների զարգացման ներկայիս մակարդակը, նշված ոլորտներում համագործակցության իրավիճակը, հնարավոր զարգացումներն ու հեռանկարները: ՀՀ և ՌԴ ֆինանսական կառույցների ներկայացուցիչները հասան պայմանավորվածության, որպեսզի ակտիվացնեն, թափ հաղորդեն երկկողմանի համագործակցությանը՝ ի մասնավորի, լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների մատուցման ռուսական փորձի ուսումնասիրման և Հայաստանի ֆինանսական համակարգում հնարավոր հետագա ներդրման ուղղություններով, ինչպես նաև ավելի ակտիվ և գործուն մասնակցությամբ Հայաստանի ֆոնդային շուկայի զարգացման գործում:

Կլոր սեղանին մասնակցելու նպատակով ՌԴ-ից մեր երկիր էին ժամանել ծագումով հայ և ոչ հայ բանկիրներ և այլ ֆինանսական կառույցների ներկայացուցիչներ: Մասնավորապես, դեկտեմբերի 2-ին ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանն ընդունել է Երևան ժամանած ռուսական «ՎՏԲ բանկ» ԲԲԸ պրեզիդենտ-վարչության նախագահ Անդրեյ Կոստինին:



06.12.2013



Շատ դեպքերում ՀԲՄ-ն պարտադրված է տանել լայն հասարակության համար անտեսանելի լոբբիստական աշխատանք, որպեսզի կանխարգելի այնպիսի օրենսդրական նախաձեռնություններ, որոնք կարող են վատթարացնել բանկերի գործունեության պայմանները կամ, հակառակը, առաջ է տանում ՀՀ ԱԺ-ում գործող օրենսդրությունում լրացումների և փոփոխությունների նախագծեր, որոնք ի վիճակի են լավացնել այդ պայմանները: Այսպիսի երկու հարցերի մասին՝ մեր այսօրվա «նյուսլեթթերում»...

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Հաճախ լինում էին դեպքեր, երբ գրավի պայմանագիրը կնքելիս և նոտարական կարգով վավերացնելիս գույքի սեփականատերը հայտարարում էր, որ գույքի միակ սեփականատերն ինքն է, բայց վարկը ժամկետանց դառնալու պատճառով բռնագանձման վճիռ կայացվելու դեպքում, ամուսինը բանկի դեմ հայց էր ներկայացնում, գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով, պատճառաբանելով, որ գույքը ձեռք է բերվել իրենց համատեղ ամուսնության ընթացքում, և ինքը տեղյակ չի եղել գրավադրումից: Արդյունքում գրավատուին որևէ պատասխանատվության ենթարկել հնարավոր չէր լինում (չկար որևէ իրավական նորմ), բանկը չէր կարողանում իր վնասը վերականգնել, որովհետև գործի քննությունն ամիսներով ձգձգվում էր, իսկ բանկը գրկվում էր իր գրավի կեսից: Ընդ որում, գրավատուի ամուսնացած լինել կամ չլինելը ստուգել հնարավոր չէր և ներկայումս էլ հնարավոր չէ, որովհետև Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության մարմինները միասնական և կենտրոնացված հաշվառում չեն վարում:

Սույն խնդիրը կարգավորվել էր ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված մեկ որոշմամբ, որը նախատես էր ձևավորել և նմանատիպ խնդիրները

պակասել էին, սակայն ներկայումս ՀՀ ԱԺ-ի մի խումբ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կրկին կվերադարձնի նախկին իրավիճակին և խիստ բացասական ազդեցություն կունենա վարկավորման գործընթացների վրա:

Ս.թ. նոյեմբերին ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանը համապատասխան նամակով դիմել է ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին, խնդրելով նրա անհապաղ միջնորդությունը և աջակցությունը վերոհիշյալ նախագծի չընդունման հարցում:

ՏՈՒԺՈՒՄ ԵՆ ԲԱՆԿԵՐԸ ԵՎ ՓՈՔԸ ԲԻԶՆԵՍԸ

07.12.2013



Վերջին ժամանակներս բանկերի հաճախորդների կողմից բանկերին դժգոհություններ են ներկայացվում դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) ծառայության մատուցման գործընթացում գնորդների և մատակարարների կողմից ԱԱՀ-ի հաշվանցման հետ կապված խնդիրների վերաբերյալ:

Իրենց հերթին, բանկերը պարբերաբար այս հարցը բարձրացնում են Հայաստանի բանկերի միությունում, իսկ բանկերից մեկը «Ամերիաբանկ» ՓԲԸ, վերոհիշյալ խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից նախագահի տեղակալ Վ. Միրումյանի ստորագրությամբ ստացված պատասխանը, ՀԲՄ-ի կարծիքով, ընդունելի չէ և կարող է լրջագույն խոչընդոտ հանդիսանալ ֆակտորինգին՝ որպես բանկային ծառայության տրամադրման գործառնություն: Մասնավորապես, ՊԵԿ-ի պատասխանում նշված է, որ «դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման դեպքում բանկը վճարում է կատարում զիջված պարտքի դիմաց (այլ ոչ թե մատակարարված ապրանքի) և, հետևաբար, այդ դեպքում հաշվանցումներ չեն

կարող կատարվել, քանի որ չեն ապահովվում հաշվանցումների կատարման «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պայմանները»:

Նշենք, որ այս սահմանափակումը ծանր դրության մեջ է դնում մասնավորապես փոքր բիզնեսը, երբ սուպերմարկետները, օրինակ, հրաժարվում են մատակարարներից ապրանք ընդունել հետաձգված վճարման պայմանով (մինչև այն չիրացվի): Բայց եթե ՊԵԿ-ն իրավացի է և օրենքն ակնհայտ վատն է, պետք է այն փոխել...

Ստեղծված իրավիճակի հետ կապված ՀԲՄ նախագահ Սամվել Ճզմաչյանը նամակներ է հղել ՀՀ ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանին և ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանին, խնդրանքով, որ վերը նշված հույժ կարևոր խնդրին սպառիչ լուծում տրվի կամ համապատասխան պարզաբանում ստանալու միջոցով, կամ համապատասխան օրենսդրական փոփոխության նախաձեռնության ձևով:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ



Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) անձնակազմը և անձամբ կազմակերպության նախագահ Սամվել Ճզմաչյանը շնորհավորում են բոլոր բանկային աշխատակիցներին, ՀԲՄ-ի գործընկերներին և ողջ հայ ժողովրդին գալիք Նոր, 2014, տարվա կապակցությամբ և մաղթում նոր գաղափարներ, բեղմնավոր աշխատանք,

առողջություն և անձնական երջանկություն Ձիու տարում:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և

տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,

- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: